



## ԷԶՄԻԱԾՆԻ Ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԲԱՑՈՒՄԸ

«Եւ արդ արա զաւ բերդ ամրութեան և աշտարակ հզօր, զի հովանացեալք ընդ տրին զօրութեամբ ամրակոտ զինուս այտրիկ աներկիւղ լիցուք յայս կեանս...» (Մաշտոց):

Եկեղեցաշինությունը հայի ակարագրի անքակտելի մասն է: Դարեր շարունակ հայ վարպետի միտքն ու ձեռքը կերտել են ու սերունդներին ավագնայի հոյակերտ տաճարներ ու եկեղեցիներ: Դրոնց խնկաբույր կամարների ներքո հայ մարդը իր արտի աղոթքն ու մաղթանքն է բարբառել առ Աստված: Ժամանակն ու արշավողների անգութ հարվածները քանդել, հողին են հավասարեցրել աղոթքի տները մեր, բայց կառուցվել ու կառուցվել են նորերը՝ միշտ վառ պահելով առաքելահաստատ հավատքը հայի:

20-ը սեպտեմբերի: Աշնանային արևաշող առավոտ էր, ուխտի ու բերկրանքի անմոռաց մի օր Մայր Աթոռի ողջ միաբանության և համայն հայ ժողովրդի համար, քանզի այդ պատմական օրը լրանում էր ազգիս առաքինազարդ Հովվապետի՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի ծննդյան 79-րդ տարեդարձը: Այդ ուրախ օրվան համընկալ էջմիածնի Ա. Աստվածածին եկեղեցու նորակառույց զանգակատան բացման ու օրհնության արբազան արարողությունը:

Հայաստանի տարբեր շրջաններից, նաև Սփյուռքից, ուխտավորների հոծ բազմություն էր առավոտ ծեփից խումբ առ խումբ հավաքվում Ա. Աստվածածին եկեղեցուն:

Ժամը 11-ին սուրբ եկեղեցի է ժամանում Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը՝ ողեկցությամբ Կ. Պոլսի Ամենապատիվ Պատրիարք Տ. Ծնորհք արքեպս. Գալուստյանի, Տ. Տիրան արքեպս. Ներսույանի և Տ. Մեսրոպ եպս. Գրիգորյանի: Հավատացյալների ուրախ ու զվարթ հայացքների ողեկցությամբ Վեհափառը առաջնորդվում է եկեղեցու արևմտյան կողմ, ուր Նորին Սրբության Տեղումնական աղոթքից հետո սկսվում է սրբազան արարողությունը: Նորակառույց զանգակատան բացման ուրախ առիթով Արգենտինայից հայրենիք էր ժամանել նաև Ա. Աստվածածին եկեղեցու ազնվափայլ բարերարուհի տիկին Դորիս Չննոզյանը՝ շրջապատված իր ընտանիքի անդամներով:

Արարողության ավարտին խոսներամ հավատացյալների ծափահարությունների ներքո Վեհափառ Հայրապետը և տիկին Դորիս Չննոզյանը կտրում են զանգակատան շուրջ բոլորը երիզող այ ժապավենը, և եկեղեցու զանգերի հանդիսավոր դրդանքները ավետում են նորակառույց զանգակատան բացումը՝ իրենց ուրախ դողանքների հետ դեպի հեռուները սփռելով ու տարածելով մեծ ուրախություն:

Եկեղեցական թափորը, սուրբ և անմահ պատարագին մասնակցելու համար, Հայոց Հայրապետին առաջնորդում է եկեղեցի, որի արևմտյան պատին գեղեցկահիշու տառերով առհավետ պիտի շողջողա անունները ազնվափայլ բարերարների. «Ի ՀԱՅՐԱ-

ՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՈՐՈԳԵՑՄԱԻ ԵՒ ԲԱՐԵԶԱՐԴԵՑՄԱԻ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԱՐԴԵԱՄԲ ՎԱՋԷԻ ԵՒ ՏՈՐԻՍԻ ԶՆՆՈՉԵԱՆ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԼՒԻԱՏԱՑԵԼՈՑ ՌՆԼԵ»:

Օրվա պատարագիչն էր Արգենտինայի հայոց թեմի քարեխնամ առաջնորդ Տ. Գրիգորիս եպս. Բունիայանը: «Հայր մեր»-ից առաջ եկեղեցու վանահայր Տ. Հովսեփ քին. Հակոբյանը ողջույնի ու շնորհակալական խոսք է հղում Վեհափառ Հայրապետին, ազնվափայլ քարերարներին և բոլոր նրանց, ովքեր սատար հանդիսացան զանգակատան կառուցմանն ու եկեղեցու քարեզարդմանը:

«Վեհափառ Տեր, Ամենապատիվ Ընորհք Սրբազան Պատրիարք,

Գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ հայրեր, հարգարժան հյուրեր և սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Այսօր բոլորս ուրախ և ցնծությամբ լըցված, կատարեցինք Սուրբ Աստվածածին եկեղեցու նորակառույց զանգակատան քացունը: Իրապես հանդիսավոր օր է, մանավանդ իմ և մեր եկեղեցու հավատացյալ ժողովրդի համար, որովհետև տարիներ շարունակ տքնությամբ և համբերությամբ աշխատելով, անձկությամբ պասսել ենք մեր կատարած գործերի պակասվորման, և ես համոզված եմ, որ այսօր ներկա հավատացյալների աչքերից ուրախության արցունքներ են հոսում:

Առավել ևս ինձ համար հիշարժան օր է, քանի որ 27 տարիներ առաջ, երբ 10 տարեկան մի պատանի էի, երկյուղածությամբ և նույնիսկ վախով ներս մտա այս սուրբ եկեղեցու կամարներից ներս: Կարծես դա երեկ էր, և Նախախնամության կամքով ադ օրից 18 տարիներ անց, 1978-ին, Աստուծո ամենակալ Աջը ինձ առաջնորդեց դեպի այս եկեղեցի, և Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ընորհազարդ Հայրապետի կարգադրությամբ նշանակվեցի Ս. Աստվածածին եկեղեցուն իբրև պատասանատու, այնուհետև վանահայր՝ իմ ուների վրա վերցնելով նրա վերակառուցման դժվարին ու պատվավոր գործը:

Անցան տարիներ, ու ես այսօր հպարտ եմ և ուրախ, որ Հայոց Հայրապետի անմիջական հովանավորությամբ, օգնությամբ և օրհնությամբ Սուրբ Աստվածածին եկեղեցին օծուվեց նոր գեղեցիկ զանգակատնով և դարձավ ներկայանալի աղոթատեղի հավատացյալ ժողովրդի համար:

«Երանի եկեղեցի շինողաց»:

Այս առթիվ ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնել ազգիս Վեհափառ Հայրապետին, որ իր հայրական հոգածությամբ սատար հանդիսացավ ինձ՝ հաղթահարելու այն բոլոր դժվարություններն ու արգելքները, որոնք ծառացան իմ առաջ այս վերջին տարիների ընթացքում:

Այստեղ նաև պարտք եմ համարում իմ շնորհակալությունը հայտնել Մայր Աթոռի շինարարներին, որոնք, քարեխճուղիսմբ կատարելով իրենց աշխատանքները, մեծապես նպաստեցին մեր եկեղեցու վերակառուցման գործին:

Վեհափառ Տեր, թույլ տվեք խոնարհ ծառայիս որդիաբար շնորհավորելու Ձերդ Սրբության ծննդյան 79-րդ տարեդարձը և աղոթելու Ձեզ համար, որպեսզի Աստված Ձեզ պարգևի քաջատողջությամբ և հաջողությամբ լի է՛լ ավելի երկար, արևոտ տարիներ:

Այս սպիտակ մեխակները, որոնք մատուցվում են Ձերդ Սրբությանը, թող լինեն մեր արտերի անկեղծության, հավատարմության և նվիրվածության պերճախոս վկաները:

Այս հանդիսավոր պահին ուրախությամբ ողջունում եմ նաև գալուստը Ս. Աստվածածին եկեղեցու քարերարուհի տիկին Դորիս Չննոզյանի, նրա դուստրերի և փեսաների, որոնք ժամանել են հեռավոր Բուենոս Այրեսից՝ տեսնելու իրենց նյութական օժանդակությամբ խնկի ծխի նման դեպի երկինք քարձրացող նոր զանգակատունը, որի զանգերը դողանջելու են այլևս:

Խոր կսկիծ էր մեզ համար, անշուշտ, մահը Ս. Աստվածածին եկեղեցու քարերար Տիար Վահե Չննոզյանի, որ այս տարվա ապրիլին Բուենոս Այրեսում կրնքեց իր մահկանացուն՝ առանց տեսնելու իր քարերարությամբ կառուցված այս հոյակերտ տաճարը: Տիար Վահե Չննոզյանը իրապես ազնիվ, համեստ և ազգասեր մի հայ մարդ էր՝ նվիրված թե՛ մեր ժողովրդին և թե՛ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Այս գեղեցիկ եկեղեցին հանդիսանում է նրա հավիտենականության հուշարձանը, քանի որ նրա անունը ոսկյա տառերով գրվեց մեր եկեղեցու մարմարյա տախտակի վրա՝ իբրև անմահության խորհրդանիշ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ երիցի»:

Խոսքի ավարտին տեղ հայրը հրավիրում է Հայոց Հայրապետին՝ տալու իր հայրա-

կան ու հայրապետական օրհնությունները:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ  
Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ  
(20 սեպտեմբեր)**

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ, ամեն:

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,

Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

«Եկեք կառուցենք լուսո սուրբ խորանը, Որովհետև սրանով ծագեց մեզ լույս Հայաստան աշխարհում»:

Այս ճշմարտությունը հզոր և պայծառ հնչեց սրանից հազար չոթ հարյուր տարիներ առաջ մոտավորապես, մեր ամբողջ երկրում, պատմական Հայաստանի ամբողջ տարածքի վրա: Բարձր, հզոր հընչեց, այո, այս ճշմարտությունը այն պահին, երբ մեր ազգը՝ հայ ժողովուրդը, ընդունեց ճշմարիտ հավատքը, դարձավ առաջին քրիստոնյա ժողովուրդներից մեկը աշխարհի պատմության հորիզոնի վրա: Դա սովորական պատմական երևույթ չէր: Մի անգամ պատահեց այդ երևույթը, մի անգամ և հավիտենապես պահպանվելու համար:

Հայերը մինչև քրիստոնյա դառնալը ունեին, անշուշտ, մի կրոնք: Մենք ասում ենք հեթանոսական կրոնք: Ծիշտ է, որ դա էլ մի կրոնք էր, բայց բնավ կարելի չէր համեմատել այն ճշմարիտ կրոնքի հետ, ինչպիսին եղավ և մնաց դարեր շարունակ քրիստոնեական կրոնքը, հիմնված, խարոջսխմած մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի Ավետարանի վեմի վրա: Հին կրոնքները ընդհանրապես, և՛ հայերինը, և՛ պարսիկներինը, հույներինը, հռոմեացիներինը, իրականության մեջ առասպելների և նախապաշարումների մի հավաքածո էին, ավելի հարմար կլինեք բնորոշել զանոնք իբրև խավարի կրոններ: Եվ այդ խավարից կատարվեց այդ ժամանակ հայոց մեծ ուսումը, թո՛ւքը խավարից դեպի լույս, Սուրբ Գրիգոր Լուսավորչի երանելի օրերին, երբ կառուցվեց նաև հայոց առաջին աղոթքի տաճարը՝ Սուրբ Էջմիածինը, 808 թվականին: Ահա այսպես սկսվեց հայ ժողովուրդի լուսո պատմությունը: Եվ այդպիսով, լուսավորվեց Հայաստան աշխարհը, հայ ժողովրդի հոգին, միտքը, նրա ամենօրյա կյանքը և նրա պատմությունը մասնավաճ: Բազմադարյան հայոց պատմությունը չորրորդ դարուց մինչև մեր օրերը հանդիսանում է իսկապես մի դյուցազներգություն՝ հանուն

Քրիստոսի հավատի, հանուն հայրենիքի և հանուն ազատության: Ահա այդպես է, որ միշտ հնչեց հզոր այս երգը, այս կոչը, այս հավատամքը՝ «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Այդ ճշմարտությունը միշտ հնչեց հզոր մեր պատմության ընթացքում: Սակայն, ինչպես ծանոթ է ձեզ բոլորիդ, բազում դժբախտ պատահարներ, չար իրադարձություններ, արշավանքներ բարբարոս: Հեթանոս բազմություններ քա՛նի-քանի անգամներ հրդեհեցին, քանդեցին հայոց կառուցած լուսո խորանները՝ վանքեր, եկեղեցիներ, աղոթատեղիներ: Բայց, փոթորիկը անցնելուց հետո, հայ հավատացյալ ժողովուրդը վերստին վերանորոգեց, պայծառացրեց, բարեկարգեց քանդված եկեղեցիներն ու վանքերը և այսպես հասավ այդ լուսի խորհուրդը մինչև մեր օրերին: Փառք Տիրոջ, այդ պղտոր ժամանակները անցան՝ զնացին, և ահա այս վերջին տասնամյակներին սկսեց նոր մի եկեղեցաշինական շրջան: Իմ կաթողիկոսության շրջանին գուճադիպեց այս բարենպաստ շրջանը, և ահա, իմ գործակիցների հետ միասին, պետական իշխանության բարչացականությամբ և օժանդակությամբ նույնիսկ, կարողացանք, ինչպես գիտեք դուք, բազում վանքեր, եկեղեցիներ վերանորոգել, վերականգնել, բարեկարգել, բարեզարդել, որոնք երկա՛ր, երկա՛ր ժամանակե ի վեր մնացած էին անխնամ, նույնիսկ ոմանք կիսավեր էլիճակի մեջ, ինչպես այս եկեղեցին էլ, այս սուրբ Աստվածածին եկեղեցին: Ահա հերթը եկավ նաև այս՝ Ս. Աստվածածին եկեղեցու վերաշինության: Վերաշինվեց և՛ ներքուստ, և՛ արտաքուստ, սուրբ սեղանի կենտրոնը ամբողջությամբ նոր կառուցված է, հատակը և նաև զանգակատունը շատ գեղեցիկ, որ այնքան հանրապես կբարձրացնե դեպի երկինք մեր Սուրբ Խաչը: Ահա թե ինչու, կարծում եմ, դուք բոլորդ հասկանում եք, թե ինչքան հոգեկան մխիթարությամբ ողջունում եմ և օրհնում կատարված վերանորոգման աշխատանքը, օրհնում եմ բարեբարներին, օրհնում եմ հիշատակը լուսաբնակ Վահե 26նոզյանի, որ, ավաղ, ինք չկարողացավ ներկա գտնվել այստեղ: Բայց նրա հոգին, վատահ եմ, ինչ-որ ձևով ցնծության մեջ է այսօր և մեզի հետ է գրտնրվում: Մենք միշտ, այս սուրբ եկեղեցվո աղոթքի սեղանի առաջ, պիտի աղոթենք նրա հոգվույն լուսավորության, նրա հոգվո խաղաղության համար: Եվ պիտի աղոթենք նաև տիկին Դորիսի և նրա բոլոր զավակների, համայն ընտանիքի անդամների քաջ-

առողջության, արևշատության և նրանց գործոց հաջողության համար: Եվ կմաղթենք, որ տիկին Դորիս, մի քանի տարին մի անգամ կրկին այցելի այս աղոթքի տունը, այս Ս. Աստվածածին եկեղեցին, որ հատկապես նրա աղոթքի տունն է:

«Երանի եկեղեցի շինողաց»:

Այս պահին ես չեմ կարող չհիշել նաև հանգուցյալ Տեր Քերոբ քահանայի անունը, որ այս եկեղեցու հոգևոր հովիվն էր: Մի պարսկահայ, շատ համեստ, բայց նվիրված հոգի: Այս եկեղեցին այն ժամանակվա պայմաններում կարողացավ պահել պահպանել իր ջանքերով և նույնիսկ փոքրիկ երեխաներ հավաքում էր, որպեսզի նրանց սովորեցնի զԱստված սիրել և եկեղեցական ժամերգությունների մասնակցել: Սերունդ պատրաստեց այն իմաստով, որ այդ տասը-տասներկու տարեկան էջմիածնեցի երեխաներին մոտեցրեց եկեղեցիին և միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո նրանց ցույց տվեց ճանապարհը դեպի էջմիածնի հոգևոր ճեմարան: Աստված նրա հոգին թող միշտ լուսավոր պահի:

Ես պիտի ուզեմ գեահատանքի խոսք ուղղել նաև Տեր Հովսեփ քահանային, որ նաև մեր դիվանատան ժրջան պաշտոնյաներից մեկն է, որ առավելապես նվիրված է այս եկեղեցուն տիվ և գիշեր, և սքանչելի գործ է կատարում: Ես ողջունում եմ իր կատարած աշխատանքը և Ս. էջմիածնից իմ օրհնությունն եմ բերում նրան, նրա ընտանիքին և այս եկեղեցվո բոլոր ծառայողներին և պաշտոնյաներին:

«Ողջ լերոք գորացեալք Սուրբ Հոգով, այժմ և միշտ և յաիտեանս յաիտեանց, ամէն»:

Հավարտ ս. պատարագի հոգեհանգըստյան մասնավոր կարգ է կատարվում Ս. Աստվածածին եկեղեցու բարերար երջանկահիշատակ տիար Վահե Չննոզյանի և նախկին վանահայր Տ. Քերոբ ավագ քհն. Ծահրազյանի խնկելի հիշատակին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ երիցի»:

Ս. Աստվածածին եկեղեցու բարեգարդամար ու բարձրաթոնիչ զանգակատան կառուցմամբ ամբողջանում է ազգիս շինարար Հայրապետի շինարարական մտահղացումներից ևս մեկը՝ պերճախոս վկան մեր դավադր ժողովրդի քրիստոնեական հավատքի ամրության ու անասանության:

\* \*  
\*

Նույն օրը Մայր Աթոռի միաբանական սեղանատանը, ի պատիվ Մայր Աթոռի բարերարներ տիկին Դորիս Չննոզյանի և նրա ընտանիքի անդամների, տրվում է հանդիսավոր ճաշկերույթ՝ ներկայությամբ Վեհափառ Հայրապետի: Ծաշկերույթի ընթացքում տիկին Չննոզյանը շնորհակալական ու որդիական երախտագիտության խոսք է հղում Նորին Սրբությանը՝ իրենց նկատմամբ ցուցաբերած ջերմ ու հայրական վերաբերմունքի համար, ապա առաջարկում բաժակ բարձրացնել Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության ու անասանության համար՝ «ի պայծառությոն Հայ Եկեղեցույ և ի մխիթարությոն ազգիս Հայոց»:

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և նորից անդրադառնում Չննոզյան ընտանիքի մեծագումար նվիրատվությանը, ապա ուրախությամբ նշում ազնվափայլ բարերարների նոր նվիրատվության մասին, միաժամանակ Դորիս, Գրիք, Սոնի և Դիանա Չննոզյանների կուրծքը զարդարում «Ս. Գրիգոր Լուսավորիչ» ոսկեհուռ շքանշաններով: Նորին Սրբությունը հույս է հայտնում, որ նրանք այսուհետև էլ կմնան հավատավոր զավակները Մայր Հայրենիքի և մեր Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ իրենց նյութական ու բարոյական աջակցությունը բերելով հայրենանվեր նոր իրագործումների:

ՍԵՐՈՎԲԵ ԱԲՂ. ԻՍԱԽԱՆՅԱՆ

